

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ» Ի
Աղեփսանդրիա

S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie



ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱԶՍԱՆ

Նր. 45
ՍԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25
—
ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԻԿԻ Է

Յր. 15
Տ ԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8
—
ԿՈՎԿԱՍ
ՏՆԱԿԱՆ ԲԱՂ. 6

ՓԻԻԿՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 22 ՓԵՏՐՈՒԱՐ 1902

ԹԻԻ 40

Յաջորդ թիւով պիտի հրատարակուի խմբագրական յօդուած մը Տեղիս Թաղ. Խորհուրդի նոր ընտրութեանց վրայ:

«Փիիհնիկ», ԼՐԱԳՐԻՆ ՅՂՈՒՄԸ

Պաշտօնական Յայտարարութիւն Ազգային Առաջնորդարանին Աղեփսանդրիոյ:

Տեղույս Թաղական Խորհրդին յառաջիկայ ընտրութեան առթիւ քաղաքիս քաղային ընտրողներու ցուցակը այսօրուրէն սկսեալ ի սես հասարակութեան կախուած է սրնչեւ սասն եւ հինգ օր, Եկեղեցւոյ բակին մէջ:

Կը հրաւիրուին տեղույս Պատ. Ազգային, վերայիեալ պայմանաժամին մէջ, իրենց դիտողութիւնները (եթէ ունին) գրաւորապէս ուղղել մեզ: Տասն եւ հինգօրեայ պայմանաժամին լրանալէն յետոյ ո՛ր եւ է դիտողութիւն ան-

հետեանք կը մնայ եւ ընտրողներու ցուցակը փակեալ կը հռչակուի:

Աղեփսանդրիա, 619 Փետրվար 1902

Ընտրող Ժողովոյ
Նախագահ
Յարութիւն Բահանայ
Յակոբեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

10 Փետր. 1902

Թերթ եւ վաճառականական Ոգի-Մեր ցեղը բոլոր քաղաքակիրք աշխարհներու մէջ, Էականապէս վաճառական ազգի մը համբար կը կրէ. եւ այդ համբար նոր ժամանակներու արտադրութիւնը չէ, այլ ամենահին ասեցները՝ Եգիպտացոց, Փիւնիկեցոց ժամանակներէն սկսած մինչեւ միջին դարերու վերջերը, Հայր ծանօթ է իբր վաճառական, անոր հետքերը կը տեսնուին ամեն տեղ, անոր ապրանքները կերթան ու կը ծախուին ամեն կողմ, Հայր առուտուր կրնէ աշխարհի ամեն ծակի

ու ծուկը: Մեր այս ըսածը կը հաստատեն բոլոր ականասես եւ օտարազգի պատմիչները, ժամանակագիրները, աշխարհագիրները: —

Այժմու Հայու վանառականական ոգին եթէ քննելու ելնենք, կը տեսնենք թէ, օրինակ 100 տարուան մէջ, իր նախկին համբաւին բաւական պատիւ բերած է. բայց այդ վանառականութիւնը, բացի քանի մը չնչին բացառութիւններէ, աւելի կողիացած հանգամանք մը ունեցած է, անոր հորիզոնը իսկ սահմանափակ եղած է, փոխանակ լայննալու, տարածուելու եւ բարգաւաճելու: Մէկ խօսքով եւ ընդհանուր առմամբ Հայուն վանառականութիւնը «*փոքր վանառականութիւն*» եղած է, եւ ասոր պատճառը գուցէ քաղաքական հանգամանքներն եղած են:

Բայց այսպէս թէ այնպէս Հայը՝ իր կրօնածին չափ վանառականութեամբ կ'զբաղի. բայց ինչ որ մեր մէջ ամենէն շատ կը պակսի, այն՝ մեր թերթերուն կամ թերթ հրատարակողներուն վանառականական ոգին է: Ի՞նչու մեր թերթերը միայն քանի մը ամիս կամ քանի մը տարի կ'ապրին. ի՞նչու մեր թերթերու մէն մի օրինակները հազարէն անոնքն շատ քիչ անգամ կ'անցնին, որովհետեւ անոնց մէջ վանառականական ոգին կը պակսի, որովհետեւ պէտք եղած միջոցները ձեռք չեն առնուիր թերթը ինչպէս որ պէտք է շահագործելու: Որովհետեւ ի՞նչ է թերթ հրատարակելը. — լայն մտքով՝ պարզապէս վանառականութիւն մը, ուր փոխանակ ուրիշ նիւթերու, թուղթը եւ գրիչը գլխաւոր դերը կը կատարեն: Ի՞նչու թերթ հանողն ալ այնչափ չի հարստանար, որչափ պարզ վանառականը: Ի՞նչու Եւրոպայի մէջ թերթ հանողները հարիւր հազարներ կը դիզեն իսկ մերիկները քաղցած կը մեռնին, որովհետեւ Եւրոպացի թերթ հանողը նախ քան թերթի սկսիլը կ'ապահովցնէ թեր-

թին յարատեւութեան միջոցները: Առաջին թիւէն սկսած արդէն քանի մը հարիւր ճրանգի յայտարարութիւններ կը հրատարակէ, ուստի արդէն բաւական ժամանակի համար ապահովուած է, յետոյ շարունակ կ'աւելցնէ իւր յայտարարութեանց թիւը, ուստի եւ հասոյթը իսկ ինչ շահ որ գայ թերթին վանառումէն եւ բաժանորդագրութիւններէն, աւելի լա՛ւ... Ի՞նչու մենք ալ այս կէտին մէջ Եւրոպացոց չհետեւինք:

Երկու Հայեր Ֆրանսական Դատարանին առջեւ: Երկուքն ալ յայտնի Բարիզի հայ գաղթականութեան մէջ, երկուքն ալ վանառականներ են պատուաւոր. մին Պր. Իսկէնէր՝ վանառական աղամանդի եւ միւսը՝ Պր. Մ. Գալփաֆնեան, նոյնպէս վանառական եւ ուսուցիչ Բարիզի Արեւելեան վարժարանին մէջ: Արդէն յայտնի է թէ (որովհետեւ մեր թերթերը ժամանակին խօսեցան այս մասին) քանի մը ամիս առաջ Բարիզի մէջ պատուոյ Ա. տեան մը տեղի ունեցաւ, որուն մէջ Պր. Մ. Գալփաֆնեան հաշի կը պահանջէր՝ կարգ մը բարիզաբնակ Հայերու կողմէն՝ Պր. Իսկէնէրէն: Պր. Իսկէնէր այդ պատուոյ Ա. տեանէն յետոյ տեղի ունեցած գումարական խօսակցութիւններէն, նիւթական վճար եւ պատուոյ արտասացած լինելուն համար, Դատարանի դիմած էր: Դատարանը տեղի ունեցաւ Փետրուարի 1ին եւ Պր. Գալփաֆնեան Դատարանուց 150 ճր. տուգանքի, որմէ 100ը վճարելու է Պր. Իսկէնէրին — որը թէպէտ 5000 ճր. պահանջած էր. — եւ միւս 50 ճր. Դատարանին կը լսենք հիմա թէ Պր. Գալփաֆնեանի փաստաբանը դիմեր է բարձրագոյն Ա. տեանին, Դատարանը սկսելու համար:

Ի՞նչ պէտք կ'ար օտարներու առջեւ մեր ներքին կոխիւնները պարզելու. մեր աղտոտ տրեքը մեր մէջ չէի՞նք կրնար լուանալ, որ գացին Դատարաններու առջեւ ալ արտաստուրեցին մեր արդէն

բաւական ընկած անունը եւ պատիւը: Եւ ի՞նչ կը նշանակին այն կարգ մը յիմար խօսքերը որոնք դրած էին Պր. Իսկէնսէրի փաստաբանին բերանը... Եւ զորս նա ափուռ զուփուռ արտասանեց ամբողջ հայ ու օտար ներկայներու առջեւ:

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա. Չ Գ Ա Յ Ի Ն

— Ա. Ն Դ Ր Ա Ն Ի Կ. — Սուրբ Առաքելոց Վանքը քողէն յետոյ՝ Անդրանիկի հայկական հրոսախմբէն մաս մը փառուած էր Մեոյ դաւար Վանայ լիճէն գաւտող լեռներուն կողին վրայ շինուած ու Մուշէն Պիբլիս սանող ճամբուն իւրաքանչիւր նորէն գիտին մօտ: Օսմ. իւրաքանչիւր քիւններն երբ որ իմացան, *հաւիտիչներու* ու ուսիկան հեծելագործի ջոկաս մը իրկեցին կոտորելու համար փախուսականները: Ա.սոնք, միայն 9 հոգի, ուժգին դիմադրութիւն մ'ըրին. սպաննեցին ուսիկանութեան հրամանատարը, ծանրապէս վիրաւորեցին համիսիյէ հարիւրապետը ու փառուցան ողջ անվրսանգ: Համիսիյէները խոհեմութիւնն ունեցան ա'լ զսնոնք չը հալածելու:

— Ա. Ղ. Ք Ա Տ Ա Ն Ն Ա Մ Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն սարեկան ներկայացումը տեղի պիտի ունենայ Մարտ 5ին *2 իմիսիս* բաւերոնին մէջ, *Սա՛նիսուն* ու *Իսաչիչա* բաւերախաղով: Յանձնախումբին նախագահն է Տիար Չարեն Սվազլը, որ իր ծանօթ փորձառութեամբը յաջողած է արդէն ըստպառել օրեակներու տոմարներուն մեծ մասը:

— Տ Ի Ա Ր Զ Ի Լ Ի Ն Կ Ի Ր Ե Ա Ն Իզմիրի փարափին վրայ, բրանվայի մէջ գտնուած պահուն յարձակում կրած է Հայէ մը որ անոր վրայ պարպած է շրջահարի գնդակ մը, որ վրիպելով սակայն, Շուէս-

Նորվէյիոյ ու Տանըմարֆայի հիւպատոս Տ. Գլէմի մէկ հասիկ որդիին դիպած է: Բարեբաղ յարար, տղուն վիճակը վսանգաւոր չէ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ֆ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ր Դ Ա Ր Ա Ն Ի Ն Մ Է Ջ

Հ Ա Յ Ա Ա Ա Ն Ջ Ա Ր Դ Ե Ր Ը

(Շար. 1^թ քիւէն եւ վերջ)

Տ. Տեղգասէի պատասխանը:

Տ. Տեղգասէի, Ա.ր. Գործ. Նախարարի՛ն է խօսքը.

... Կը յանդիմանեն մեզ, *կ'ըստ*, թէ մեր տարիքին օսմ. ջրերուն մէջ ներկայութենէն չ'օգտուեցանք յարուցանելու համար Հայոց Հարցը: Խիս հաւանօրէն, Ա.ր.սափին Գործ. Նախարարութեան պիտիտէն ֆննութեան բանալիք վիճաբանութեան ընթացքին մէջ առիթը պիտի ունենամ բացատրելու թէ՛ օսմ. ջրերուն մէջ ճրանս. գործողութիւնը պարտ էր դադարիլ հէնց որ դարձեր զայն առաջ բերող այլամերժօրէն ճրանսական պատճառը: Միւս կողմէ, ո'չ մէկու բան մը պիտի սովորեցնեմ հոս երբ հաստատեմ թէ Հայոց՝ Հայաստանի մէջ ապահովութեան հարցը, ինչպէս նաեւ մակեդոնականը, չէ՛ հարց մը, զոր Ֆրանսան կարենայ կամ պարտի միս միճակը կարգադրել Թուրքիոյ հետ: Իսկապէս միջազգային հարց մըն է այն, որուն նկատմամբ Թուրքիան, Պերլինի գոնկրէին մէջ, տէրութեանց հանդէպ առած է վրան պարտաւորութիւններ, որոնցմով Ֆրանսան անտուտ կը շահագրգռուի եւ որոնց վրայ կը յուսայ թէ տէրութիւնները պիտի պատեն համարին մասնաւորապէս դարձրել իրենց ուշադրութիւնը (*շա՛ս շար, շա՛ս շար*):

Տ. Էսուար Վաշեան. — Պէ՛տ է դարձրնել անոնց ուսարութիւնը:

Արս. Գործ. Տ. Եսխարարք. — Խիստ սոյգ է — ու ես այդ հոս իսկ հաստատեցի քանի մը շաբաթ առաջ, եւ արգոյ Տ. Ռուանէ դեռ նոր յիշեցրնել տուա իմ լեզուս — իստ սոյգ է որ այս կացութիւնը չէ՛ այն զոր կը կարծէր Երուսալեմ, երբ, Պերլինի դաւաճութիւն ճիշդ յօդուածով, հարկադրեց Թուրքիան «Հայաբնակ նահանգներուն մէջ գործադրել հարկաւոր բարեկերպ գումներն ու, մանաւանդ, երաշխաւորել անոնց ապահովութիւնը Չեքեզներուն ու Գորսերուն դէմ:»

Իրա՛ւ է — ու արգոյ Տ. Ռուանէ պէ՛տ էր զայդ անելցնել, զի ինք լիովին ծանօթ է այս պատմութեան — իրա՛ւ է որ երբ խնդիր եղած էր վաւերացման հրովարտակներ հանել Տայն պարագային համար, ուր Գրան ստանձնած պարտաւորութիւնները չը գործադրուէին, Գոնկրէն վարանեցաւ. նիստերուն աստեղագրութեանց ընթերցումը կը պարզէ այս վարանովին պատճառը: Աւելորդ է Խորհրդարանին մէջ բացատրել թէ ինչո՛ւ գոնկրէն չուզեց «ընդունել որ իւրաքանչիւր տնտեսական աշխատանք 61րդ յօդուածին գործադրութեանը». արգիլեց նաեւ տնտեսութիւնները «հաւերաշիտէն պայմանի մտնել ՚ի հարկին ուժ բանեցնելու», դիւանագիտական միասնաձուգ գործողութիւնն անգամ կարելի չ՛եղաւ պայմանագրել, ու ՚ի վերջոյ, համաձայնութիւն գոյացաւ յայտարարելու համար թէ՛ «Դուռը գործադրուած միջոցներուն վրայ, պիտի պարբերաբար տեղեկութիւն տայ տնտեսանց, որոնք պիտի հսկեն անոնց գործադրութեանը:»

Այսպէս, տեա՛րք, բոլորովին վերէն նայելով, կը վախճուի թէ՛ նշանակական գործողութենէ կրնան

պայտիլ խնդիրներ, անհասական թէ հաւատական, որոնց կարգադրութեան համար դեռ պատրաստուած չենք, եւ որոնց լուծումը կարելի չէ՛ ձեռք բերել առանց թեթեւ ընդհանուր փոփոխութեան մը վճարելու: Ո՛վ կըրնայ չափել այդ երկիրին բաժինը 1894, 1895 եւ 1896ի Հայկական ու Կ. Պոլսոյ դէպքերուն մէջ:

Բայց նոր կացութիւն մը ստեղծեցին այս դէպքեր, որոնց վերադարձը, — կրնայ մաքր ինքիւն հարցրնել, — պէտք չը յարուցանէ՞ր, իր բովանդակ արտօնութեամբ մէջ տե՛ր պիտի չը դնէ՞ր անհարկու հարցերը, որոնք խոհականօրէն հեռացնել կուզուի: Անոնց վերադարձին սպառնալիքն անգամ զանոնք մէջ տե՛ր դնելու բնութիւնն ունի:

Այս ի՛նչ չարաղէտ հակասագիր է որ բնակչութիւններ — որոնց ստացուածքներուն անպատիժ կերպով թալլուիլը կը թոյլատրուի սակաւին եւ որոնք կը տեսնեն իրենց զոհ ըլլալը շարունակեալ ոնիրներու, խիստ յանախ անպատիժ թողուած սպաննութեանց — ՚ի վերջոյ իրենք իրենց ըստն թէ՛ ամենայն ինչ լաւագոյն է քան այս կեանքը՝ կոտորածի մը մղձաւանջին սակ...:

Ասոր համար, ընդհ. խաղաղութեան մտաւորութեան չափով մաքրապիւրութենէ մղուած Ֆրանսան, այս վերջին տարիները, ստիպուեցաւ — ու արգոյ Տ. Ռուանէ լաւ գիտէ — կեցրնել չարիքներ որոնք այնչա՛փ անելի արժանի են աշխարհավարներուն միտքն զբաղեցնելու, ո՛րչափ հանրային խղճմիտքներ նուազ անտարբեր կը գտնուի անոնց հանդէպ:

Ես արդէն հոս, քանի մը շաբաթ առաջ պատմեցի դիւանագիտութեան նկատմամբ զոր շատ անգամներ ի գործ դրինք Կ. Պոլիս, եւ ուրիշ արարքներ որոնց ազդողութիւնը Հայերն իսկ հանչեցած են ու յայտարարած: Թուրքիոյ հետ այս նոր վէճն ալ անոնց հա-

մար առանց օգտի չեղաւ ու նոյնքակ
Հայերն են առաջինները — կը զար-
մանամ որ Տ. Ռուանէն կ'անգիսանայ-
հաստատոյներէն թէ՛ մեր ցոյց տուած
կորո՛վը կեցոյց գործադրութիւնը
սպառնալիքներուն, որոնք, — իրենք կը-
սէին — այս վերջին ամառուան օրերուն
մէջ իրենց գլխուն վերեւ կուսակուած
էին:

— ... Վնականօրէն վստահ
հեռացնելու համար, Հայերն ու իրենց
հետ ուրիշ նման կեղեքուողներ ալ,
կայսրութեան ուրիշ մասերուն մէջ, կը
պահանջեն սէրութեանց միջամտութիւ-
նը: Անոնք որ պիտի ձգտէին կարծելու
թէ ո՛չ ինչ աւելի դիրքին է քան այս
միջամտութիւնը, թո՛ղ բարեհաճին յի-
շել Պերլինի Գօնկրէին պատմութիւնը.
թո՛ղ անդրադառնան բազմապատիկ,
փափուկ, ծանր հարցերուն, զորս այն
կրնայ արթնցնել:

Եւ սակայն անոնց միահամուռ
գործողութեան օրինակն ի Զին, ուր,
հակառակ թիրխացութեանց ու ան-
համաձայնութեանց այնքան պատճառ-
ներու եւ պատճառներու, սէրութիւն-
ներն իրենց միաբանութիւնը պահեցին,
թոյլ կուտայ խորհելու թէ այսպիսի
ջանք մը պիտի վեր չ'ըլլար իրենց բա-
րի կամէն (*շա՛ս շառ, շա՛ս շառ*):

Ասկէ գաւ, խնդիր չը կայ Սուլ-
թանէն իր իշխանութեան սակ ինկած
այս կամ այն ցեղին համար առանձ-
նաւորումներ բրցնել, զորս կարե-
նայ գործածել դրացի ցեղերը հարըս-
տահարելու համար: Խնդիր՝ ...

Տ. *Կիւսքալ Ռուանէ*. Ապրելու
առանձնաւորումներն վրայ է:

Արժ. Գործ. Տ. *Նախարարք*. —
Խնդիր է ստանալ կայսրութեան բոլոր
բնակչութեանց համար, առանց խտրու-
թեան կրօնի կամ ցեղի, արդարացի
վարչութիւն մ'ու անկողմնակալ ար-
դարութիւն մը. (*Շա՛ս լաւ, շա՛ս լաւ*):
Խնդիր է մանաւանդ ստանալ ապահո-

վութիւնը, որ ո՛չ նուազ հարկաւոր է
Թուրքիոյ կեանքին ո՛րքան Եւրոպային
հանդարտութեանը: (*Շա՛ս լաւ, շա՛ս
լաւ*):

Ես չ'եմ ըսեր թէ քիչ կարեւոր է
այն ձեւը, որով սէրութիւնները պիտի
կարծէին միջամտել պարտիլ. բայց կու-
զեն թո՛ղ միասին դիմեն Սուլթանին,
կ'ուզեն թո՛ղ նախընտրեն զաւս զաւս խօ-
սել անոր, իրենց խօսքը լսելի պիտի
ըլլար անուշտ, եթէ զանոնք անջատե-
լու ամեն յոյս լիելու չափ ուժով՝ մի-
աբան որոշողութիւն մ'ու միաձայն
համազում մը յայտնի ընէր:

Ասի, ըս իս պիտի ըլլար այնքան
հաղափական կանխատեսութեան, ո՛ր-
քան մարդկային համեմատութեան
բարձր գործ մը: Եւ ոչ ոք այսօր կրնայ
սարակուսիլ թէ՛ Ֆրանսան — որ իր
առանձինն ընել կրցած բոլոր միջոց-
ներն արդէն գործադրած է, — պատ-
րաստ չ'ըլլայ եռանդագին աշխատակ-
ցելու անոր, համազում ըլլալով որ
Թուրքիոյ անկեղծ բարեկամը պիտի
ցուցնէ ինկզինք յիշեցնելով անոր թէ
պետութիւն մը չը կործանէր կամ երկար
ատեն անպատիւ կերպով կործանել չը
սար իր սեպհական գոյութեան պատ-
ճառները: (*Ծախահարութիւնք մեծ թի-
ւով նստարաններու վրայ*):

Տ. ՌՈՒԱՆԷՒ ՊԱՏՄԱՆԱՆԸ:

Տ. ՆԱԽԱԳԱՀԸ. Խօսքը Տ. Ռուա-
նէնէն է: Տ. Ռուանէ կը ցաւի հաստա-
տել թէ նախարարին պատասխանը բա-
ցարձակօրէն ժխտական է:

Ի՞նչ պիտի պատահի վաղը, կը
հարցնէ ինք իրեն:

Հոկտեմբերի վերջն ու նոյեմբերի
սկիզբն է, կ'ըսէ, որ բրիտանական ջրերը
գացինք մեհի. անկէց ի վեր ձմեռը հա-
սաւ, ձիւներուն մէջ պաշարելով գիւ-
ղերը, ընդհատելով Հայաստանի մէջ
հաղորդակցութիւնները, ու 1901-1902ի
ինչպէս 1893-1894ի ձմեռը, բրիտանական
ափսոսալու նոր արեւանքներ չ'ե-

դան: Կը կրկնեմք թէ չէ կարելի որ ըլլան, որովհետեւ հաղորդակցութիւնները խզուած են:

Բայց ինչ որ կը վախցուի, այն է որ, վայրկեան մը սարսափած՝ Քրանսական տարւոյն թրակայան ջրերը ներկայութենէն՝ Սուլթանն անմիջապէս ջարդերը կեցուցած ըլլալով, վաղը նորէն չ'սկսի, որովհետեւ Քրանսային պախանջումներուն մէջ չը գտաւ բան մը, որ բնութիւնն ունենայ իրեն հակըցնելու թէ՛ ինք պատասխանատու էր իր հրամաններով, իր անձնական թելադրանքով գործուած արարքներուն, եւ թէ՛ Սուլթանը նորէն այս բանից մէջ չը տեսնէ, ինչպէս տեսաւ 1896-1895 ին, շարունակելու փաշայեան մը:

Այս է զիս սարսափեցնողը, Տեարֆ: Այո, մեր միջամտութիւնն Արեւելի մէջ կրցաւ կեցնել ջարդերը, բայց այս դուրը կարնասեւ պիտի ըլլայ: Հէնց որ գիտցուի թէ Հայերու ջարդիչներն անպատիժ պիտի թողուին, թէ՛ անոնք Քրիստոնեաներ են որոնք Քրիստոսի արիւնովը չեն գնուած, Ապս-Իլ-Համիդի գլխասիչները ճշտը տուած չը տուած, պիտի վրանին վազեն: Ու կարն ընդհատուածը գոր առաջ բերած պիտի ըլլաք, լայնորէն պիտի փոխարինուի կորովովը, գոր դահիճները պիտի ՚ի գործ դնեն դարմանելու համար կորուած ժամանակը:

Կը վախնամ, մէկ բառով, թէ գարնան վերադարձին, Հայաստանը 1902ին չը գտնուի 1895ի կացութեանը մէջ: (*Շահ շար, շահ շար ծայրագոյն ճախակողմը:*) Միայն սա տարբերութիւնը պիտի ըլլայ որ, 1896ին, ո՛չ մամուլը, ո՛չ երոպական խորհրդարանները չ'էին ճախապէս իմացած. այս անգամ, Երոպան առաջուց իմացաւ, ու երբ 1896ի Աղէտները նորէն կրկնուին, Երոպան ուղղակի պատասխանատու պիտի ըլլայ: (*Մարտահարութիւնի ծայրագոյն ճախակողմը:*)

Կառավարութեան օրակարգը 235ի դէմ 280 քուէով ընդունուեցաւ:

— Դ.Ս.ՐՉԵԱԼ ՏՐԻՊՈԼԻՍ. Միլանէն հասած տեղեկութիւններ կը հաստատեն թէ՛ Իտալիան մօտեւ զօր պիտի թափէ Տրիպոլիս, ու մտադիր է վերականգնել *Գարամանցիներուն* արքայական հարստութիւնը, գոր թուրքերը կապած էին 50 տարիներէ ի վեր. այդ հարստութեան տոհմէն իբրեւ մը պիտի դնէին իտալական թեսարկութեան սակ, ճիշդ ինչպէս որ Ֆրանսան ըրած է թունուզի մէջ այնքան յաջողութեամբ: Մանրամասնութիւնները կը պակսին, բայց զինուորական պատրաստութիւնները, որոնք այնքան արագորէն առաջ կը տարուին, անվիճելիորէն կը հաստատեն այս տեղեկութեանց ստուգութիւնը:

— ՊՈՒԽԱՐԱՅԻ ԷՄԻՐՈՒ մօտեւ Ս. Բեթրապուրկ կ'սպասուի: Էմիրին այս ուղեւորութիւնը գրեթէ բոլոր լրագիրներուն են, ադրել կուսայ ազգան յեղափոխութեան մը խմբումը, որուն պայքումը մօտալուս կը կարծուի: Էմիրին հողերը Ռուսիոյ գերիշխանութեան սակ կը գտնուին:

— ՊՍՂՏՍՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻԻՆ շինութեան առ հաշի՛ գերման ընկերութիւնը 400,000 ոսկիի լանխավնար մը կ'ընէ Գրան, որ այս գումարը պիտի ըստանայ 20 ամսավնարներով: Այս գումարին կէտը պիտի յատկացուի ռուսական, անգլիական ու ասորիական այլ եւ այլ պահանջներ գոցելու: Միս կէտով պիտի վնարուին դրանիկներուն յետեւ ամսականները:

— ԵՐԻՏՏԱՄՂԻԴ ԹՈՒՐԿԵՐՈՒՆ ԳՕՆԿՐԷՆ որուն գումարումը ճախապէս արգիլուած էր Բարիզի ոստիկանապետութեան կողմէն, վերջապէս տեղի ունեցաւ ամսոյս 4 ին ու տեւց 5 օր: Գօնկրէին վիճարանութեանց վերաբերեալ կարեւոր հատուածները թարգմանորէն կը փաղեմք թ.Ս.ՅՄՂԷՆ:

« Գօնկրէին ներկայ եղող Հայե-

րուն ու Օսմանցիներուն մէջ բացարձակ համաձայնութիւն գոյացած է. Ասիական ու Եւրոպական Թուրքիոյ կարգ մը նահանգներուն մէջ դաւեագիրներով ու միջազգային պայմանագրութիւններով սրամաղրուած յանձնառութեանց կիրարկուիմը սէրութիւններէն պահանջելու սիպոզականութեան վրայ. դաւեագիրներ՝ որոնցմէ բոլոր Օսմանցիները կրնան օգտուիլ. միւս կողմէն, որովհետեւ Հայերը յայտարարած են թէ՛ չեն կրնար իրենց հիգերը միացրնել միւս Օսմանցիներու հիգերուն ներկայ վարչական *ռէժիմ*ը սահմանադրական *ռէժիմ*ի փոխելու մասին փութարկուած որոշմանց գործադրութեանը համար, այս սահմանադրական *ռէժիմ*ը անպատեհ ու իրենց շահերուն հակառակ նկատելով, Գօնկրէին Օսմանցիները, ընդ որս Յոյներն ու Ալբանիացիները մեծամասնութեամբ յայտարարած են թէ՛ այս մասնաւոր կէտին վրայ հայեացներու տարբերութիւնը չը կրնար արգիլել ո՛ր եւ է կերպով՝ փնտնելու համար Հայերուն իրենց տառապած բոլոր չարիքներուն ազդու դարմանները, եւ կ'որոշեն հետապնդել.

1. Հայաբնակ եւ ուրիշ նահանգներու մէջ տեղային վարչութեան կազմակերպութեան մը վերաբերեալ օրինաւոր փափագներու գործադրութեանը:

2. Ազատական գաղափարներու վրայ հիմնուած կեդրոնական կառավարութեան մը հաստատումը, որ լաւագոյն երաւեստութիւնը պիտի ըլլար ազգային իրաւանց պահպանումին ինչպէս եւ նահանգային վարչութեան բարոյ պատշաճ վարման, որմէ Հայք պիտի օգտուին այնպէս եւ ա՛յն աստիճան որով կայսրութեան միւս ժողովուրդները:

ՄԱՐԳԱՐԻՏԵՆԵՐ

Մանչերու կրթութիւնը պատշաճութեանց անկեղծ հայրենասիրական է, եւ մայրերն այս կողմանէ միայն կարգուած են ֆաղստական կեանքին, շայն որքա՛ն մեծ եւ պատկառելի է այս պատշաճութիւնը:

Մրտութիւնը մեր գաղափարներուն մէջ, մրտութիւնը մանաւանդ մեր զգացումներու մէջ՝ անս' զնեզ կորսնցնողը:

Մ. ՄՕՆԵԻ

ՏՕԳԹ. Ս. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ

Ամերիկեան բժիշկ եւ վիրաբոյժ, մասնաւորապէս կը դարմանէ ջղային տարբերութիւնները ելեկտրականութեամբ, նաեւ կուրծքի, եւ ներքին գործարանաց հիւանդութիւնները: Ազատներուն կը նայի ճիշտաբար: Առ այժմ կը բնակի «Rue el Caied Gobar» անուն փողոցին մէջ թիւ 24 սան 2րդ յարկը, Մօրէլի խանութին մօտը: Ժամերը 10-11 կէս օրէն առաջ, եւ 3-5 կէս օրէն յետոյ:

Յիշեալ Տօգթօրը նաեւ տարբերուումնաւորութեամբ լիովին համոզուած ըլլալով թէ կարելի է առաջուրնէ որոշել սեռի տեսակը ըստ կամս. այն ծնողք որ ու է է պատշաճաւ նախամեծար կը համարին մանչ կամ աղջիկ գաւակ ունենալ, կրնան թէ՛ անձամբ եւ թէ՛ նստակալ իրենց դիմել եւ այդ մասին ձեռք առած ամենապարզ եւ միանգամայն ամենագոհացուցիչ միջոցներէն օգտուիլ: Իր պայմանները դիրամասչելի են, եւ վարձատրութիւն չի պիտի պահանջուի ակնկալուած արդիւնքը երեսան գալէ առաջ:

Նամակները պէտք է բովանդակեն նամակագրոյն, եւ ուղղուին հետեւեալ հասցէին. Dr. S. V. Ezekielian, Poste Restante, Alexandrie (Egypte):

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ,
ինչ որ նուազ կարեւոր չէ,

ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Միաց. Նահանգներուն Ուս-
տոր քաղաքէն Հայրենակից մը
մտադիր ըլլալով Հայերէնի
թարգմանել տալ արաբերէն
գիրք մը, կը փնտռէ այդ եր-
կու լեզուներուն Հաւասարա-
պէս հմուտ եզոզ անձ մը, ո-
րուն թարգմանչութիւնը բնա-

կանաբար պիտի վարձատրուի:
Դիմել Փիլիսիկի խմբագ-
րատունը. նամակ ղրկել թեր-
թիս Հասցէին՝

S. Barat, Rédaction Punig.
Alexandrie (Egypte)

Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻԶԲ
Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսիլի հայ տուներուն
ծանօթ յանախորդ, կը պատրաստեն
գոհացուցիչ պայմաններով ամեն տե-
սակ կահեղէններ, վարագոյր, եւն.
Յանձնարարութի ն գ խնամով կը
կատարուին:

Դիմել, Աղբարիկ, Ռիւէլ-էլ-Զահասպի,
Attarine Ruelle - el - Zababy

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդգէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 Ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդգէմ հրդեհի ինչպէս
նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսագոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ

Աղեֆսանդրիս, պզտիկ Մեկնչիե Ապուսաւրսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ըն-
կերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 Ֆրանկ